Զինաիդա Բալայան

ՀԱՅ ԵՎ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵԶԱԿԻ ԿԵՐՊԱՎՈՐՈՒՄԸ. ՄԵԼԻՔ-ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ ՄԵԼԻՔ ՀՈՒՍԵԻՆԻ ԴՈՒՍՏՐ ԳԱՅԱՆԵ

Բանալի բառեր՝ *կերպարների համակարգ, Աննա խաթուն, Գայանե, հոգևոր դաս, քաղաքական քրոնիկա, Մելիքենց Մանաս, գաղափարակիր հերոսներ, Լեո, Դիզակ, Սուլեյման բեկ, Բերդավան, մելիք Շահնազար Մեծ*

Գրող, գրականագետ, պատմաբան, գրականության պատմաբան, ազգագրագետ, հրապարակախոս, մշակութային գործիչ Լեոյի անունն անվերապահորեն և ամուր թելերով կապված է եղել 19-րդ դարավերջի և 20-րդ դարասկզբի հայ գրականության բոլոր տեղաշարժերին, գրական ուղղությունների ու հոսանքների պատմությանը, մեղվականների ու մշակականների համառորեն ընթացող պայքարին, ժամանակաշրջանի գրական դեմքերի երկերի քննությանն ու գնահատությանը:

Լեոյի՝ վեց տասնյակի հասնող գեղարվեստական գործերից առանձնանում է «Մելիքի աղջիկը» (1898) պատմավեպը կամ ավանդավեպը, որի նյութը վերցված է օսմանցիների դեմ 17-րդ դարավերջի և 18-րդ դարասկզբի Վարանդայի մելիքության, ամբողջության մեջ Խամսայի մելիքությունների ազատագրական պայքարի էջերից:

Առանձնահատուկ նպատակադիր սկզբունքներով է ստեղծված Լեոյի ավանդավեպի կերպարների պատկերասրահը, որն առանձնանում է սոցիալ-դասային տարբերակիչ գծերով, երևույթների քննության տիպաբանական մոտեցումներով, ժամանակի մարդկանց հոգեբանության լավագույն ռեալիստական բացահայտումներով, գաղափարակիր հերոսների ընդգծումներով, ժողովրդի խոր ու թանձր, արխայիկ մտածողությամբ, ավանդութակիր շերտերով, հոգևոր դասի եսասիրական շերտերը ներկայացնող տիպիկ բնավորությունների կերտմամբ, որոնք «արյուն արյան դիմաց» կարգախոսի երդվյալ հակառակորդներն են:

Պատմական տարրերով և ավանդույթներով լի մի ուսանելի հյուսվածք է պատմավեպը, մանավանդ Օսմանյան Թուրքիայի լծի դեմ 1733 թ. Արցախի գահերեց իշխան Դիզակի մելիք Ավանի գլխավորությամբ, Աննա խաթունի և դստեր՝ Գայանեի գործադրած գյուտ-հնարքի շնորհիվ և անմիջական ղեկավարությամբ վարանդացիների կազմակերպած ապստամբությունը և մի գիշերվա մեջ 7000-ից ավելի օսմանցիների ջարդը, հայերի աննախադեպ և փայլուն հաղթանակը:

«Մելիքի աղջիկը» պատմավեպի կերպարների համակարգում գլխավոր հերոսներից առանձնանում է Գայանեն՝ հայ գրականության ստեղծած լավագույն, անմրցակից հերոսներից մեկը՝ գաղափարապես բարդ անցումներով հասունացող, հոգեբանական ներհայեցումներով առանձնացող, իր տեսակի մեջ զույգը չունեցող, նոր տիպի կերպավորում, որը Լեոյի գրչին և ավանդավեպի գաղափարակարգին առանձնահատուկ փայլ է բերում:

Թերևս գաղափարական և անձնվիրության, հայրենասիրության դրսևորման իմաստով Գայանեի կերպարը կարող ենք համեմատել Գագիկ արքայի դստեր՝ Ծովինարի և Խաչենի ինքնակալ արքա Հասան Ջալալ Դոլայի դստեր՝ Ռուզան-Ռուզուքանի կերպարների հետ. նա նույնքան անձնուրաց հայրենասեր է, որքան վերջին երկուսը: Բայց այստեղ այլ հատկանշական քննադաշտ է բացվում:

«Սասնա ծռեր» դյուցազնավեպ, 8-10-րդ դարեր:

Կենտրոնական հերոսուհու՝ արքայադուստր Ծովինարի ձեռքը հայոց Գագիկ արքայից խնդրող Բաղդադի կռապաշտ խալիֆը միայն այն դեպքում կշարունակի հայոց երկիրը հարկատու դարձրած՝ խարջի տակ դրած, պահել, եթե արքան չհամաձայնի իր պայմանին. Գագիկ արքան, անշուշտ, չի համաձայնում այդ պայմանին, սակայն Ծովինարը որոշում է հայրենի երկիրը փրկելու համար զոհել իր անձնականը հանուն ընդհանուր, ազգային շահերի՝ հայրենիքի փրկության համար հարսնանալ կռապաշտ խալիֆին:

Մուրացան, «Ռուզան կամ հայրենասեր օրիորդ» դրամա, 13-րդ դար:

Գլխավոր հերոսուհու՝ իրեն Խաչենի ինքնակալ արքա հաստատած Հասան Ջալալի դուստր Ռուզան-Ռուզուքանի դեպքում նրան կնության խնդրող, թաթարաց մեծ զորապետ Չարմաղանի և հավատով քրիստոնյա Ելթինա խաթունի որդին՝ Բուրա Նուինը, պատրաստ է հայ հազար կապյալներին ազատելու, զորքերը հանելու Խաչենի մելիքությունից, բարեկամական դաշինք կնքելու Խաչենի իշխանի հետ՝ նրա դստեր հետ ամուսնանալու և Թաթարաց երկրի զարդը դարձնելու պայմանով, եթե Ջալալի համաձայնությամբ Ռուզանը ամուսնանա իր հետ:

Լեո, «Մելիքի աղջիկը» պատմավեպ, 18-րդ դար:

Գայանեի դեպքում այլ են նրան կնության ցանկացող, բռնությամբ իսլամացած քրիստոնյա Սուլեյման բեկի նպատակը և ընդհանուր թշնամու՝ օսմանցիների վայրենաբարո բնույթը, ծրագրերը: Նշանակություն չունի, թե Գայանեի հետ կամուսնանա Սուլեյման բեկը. նախորոշված ժամանակում՝ գարնանագալին, Ղարաբաղը պիտի կործանվի, դառնա արյունոտ զոհասեղան, և այդ սպանդից ոչ մի գյավուր կենդանի չի պրծնի՝ մելիքների տոհմերով հանդերձ, կվերանա հայկականության շունչն իր հնամենի բնօրրանից՝ Վարանդայից, Արցախից:

Նշված երկերի թշնամիների կերպավորումներից երեքն էլ՝ արաբները՝ հազարացիները, թաթարները, օսմանցիներն ունեն իրենց բարբարոսական էությունը, ժողովուրդներին ստրկացնելու, գերելու, ոչնչացնելու իրենց ահավոր ծրագրերը, բայց նրանց արքաները, զորաց գլխավորները հայոց արքայադուստրերի հետ ամուսնանալու հիմքում դնում էին այդ երկրներն ազատ թողնելու, հարկատու չդարձնելու, չպահելու՝ արքայական հրամանով հաստատված նախապայմանը, իսկ օսմանցիների դեպքում այդպիսի պայման չկա. թե՛ հայոց գերեվարված գեղեցկադեմ կանայք ու աղջիկները, թե՛ Վարանդայի մելիքության Մելիք-Շահնազարյան տոհմի երբեմնի հզորազոր մելիք Հուսեինի դուստր, իր տեսակի մեջ առանձնացող, չնաշխարհիկ գեղեցկուհի Գայանեն միայն կրոնափոխվելուց հետո կլինեն վաճառքի հանված ապրանքներ, կամ Գայանեի դեպքում՝ Սուլեյման բեկի սիրելի կինը, իր հարեմի գեղեցկուհին. այսքանը: Այնուհետև թշնամին նույն ոխակալությամբ մտադիր է 1733 թ. գարնանագալին իրագործել վաղուց ծրագրածը՝ ամբողջությամբ կործանել, հրի ճարակ դարձնել Արցախի մելիքությունները, մելիքներին ժողովրդով հանդերձ սրի քաշել, հողին հավասարեցնել Վարանդան, որտեղ թշնամին որջակալել էր, ինչպես իր տանը, և որտեղից իրեն չենթարկվող ուժ էր երևան եկել՝ հանձինս ապստամբ խմբապետ Մանասի ու իր՝ ոչնչից չվախեցող զժերի:

Բոլոր առումներով հայ գրականության մեջ առանձնանում է Գայանե հերոսուհու կերպարն իր բոլոր տիպական առանձնահատկություններով՝ թե՛ գործելու, թե՛ պայքարելու եղանակներով, թե՛ անձնական և հայրենական ընդհանուր թշնամի ունենալու հանգամանքներով, թե՛ հայրական հզոր պաշտպանությունից, խորհուրդներից զուրկ լինելով ու առաջնորդվելով ցածր դասի՝ ժողովրդի մարդու՝ Մանասի խորհուրդներով, թե՛ թշնամուն հարվածելու հոգեբանական բարդ անցումներով: Այդ ճանապարհին իրական հիմքեր են ձեռք բերում նրա քաղաքացիական, գաղափարական հասունացումը, նպատակին հասնելու համար որդեգրած դաժան միջոցները, որոնց նպատակադրված ծրագրով կործանման կարժանանան պղծության, ավերի, բռնությունների, այլանդակությունների սովոր ավազակաբարո և ոճրագործ օսմանցիները, Սուլեյման բեկն իր հրամանատարի՝ Մուստաֆա փաշայի գլխավորությամբ, ով մռութն արնաներկ գայլի նման ի վերջո կարողացավ ճողոպրել հայերի դատաստանից:

Մելիք-Շահնազարյան մելիքական-հերոսական տան ազնվազարմ գենն ու ավանդույթները, վեհությունը, ազնվամտությունը, անվախությունը, քաջությունն ու հերոսականությունը, արդարին պաշտպանելն ու սատար կանգնելը, գեղեցկությունը, տաղանդավորությունը, ուղղամտությունը, չարին հակառակվելու կամքն ու խելամտությունը կարծես մի վերին նախապայմանով կենտրոնացած ենք տեսնում Գայանեի կերպարում: Վերջինիս հայրը՝ Մելիք-Շահնա-

զարյան մելիք Հուսեինը, դստեր խառնվածքային գծերը բնութագրելիս ասում էր. «Դիզակի արյունը կանանց համար չէ ստեղծված, ինչպե՞ս դու աղջիկ ծնվեցիր»[1]:

Համարյա նույն մտքերն է արտահայտում նաև Մանասը, սակայն չհավանելով մելիքի տղաներին. «Աստված Դիզակի և Վարանդայի տոհմերի գեղեցկությունը, խելքը տվել է Գայանեին, ապա բաժանել է՝ խելքը տվել Հովսեփին, իսկ գեղեցկությունը՝ Շահնազարին, բայց երկուսին էլ զրկել է ձեր արյունից. այդ պատճառով մեկը ոչինչ է իր խելքով, մյուսը՝ իր գեղեցկությամբ»[2]:

Թույլերի, հալածյալի պաշտպան է Գայանեն: Փոքրիկ, երես առած եղբորից՝ Շահնազարից ծեծված մեծ եղբոր՝ կաղ Հովսեփի պատասխանը, թե միշտ ծեծում է իրեն, երբ նեղացած է մի բանից, զայրացնում է քրոջը. վերջինս անմիջապես որոշում է կայացնում: Հերոսուհուն համամիտ է հեղինակը. «Պաշտպանել… Այժմից իսկ, խիստ, քաջաբար պաշտպանել մարդուն…. Մի՞թե բռնավորը միայն նա է, ով անչափ ուժեղ է, ով կեղեքելու բոլոր հարմարություններն ունի և ոչ ոքից չի վախենում: Իհարկե ոչ: Բռնակալ է թե՛ Սուլեյման-բեկը և թե՛ չնչին Շահնազարը: Երկուսն էլ հավասարապես զզվելի են»[3]:

Գայանեն իրեն խոհեմության կոչող կույս Հեղինեից խնդրում է, որ որպես եկեղեցու սպասավոր՝ նա անսա դրսում մնացած, թշվառության, արյան ու սովի ենթարկված որբերի չարչարանքին ու օգնության ձեռք մեկնի. «– Ի՞նչ կլինի… Տիրամայրը…. Բոլոր թշվառների, բոլոր վիրավորների մայրը նա է…. Նրա վանքում տեղ շատ կա, և հացն էլ անսպառ է: Պատսպարել փոքրիկ թշվառներին այնտեղ, պահպանել, մեծացնել, յուրաքանչյուր կույս կդառնա մայր, յուրաքանչյուր խուց մանուկ-նահատակների պաշտպանը կլինի ցրտից, անտերությունից և մահից….

– Տեսնո՞ւմ ես մեր լեռներում քանի ավերակ վանքեր կան…. Դրանք այդ անհնազանդ վանքերն են…. Մենք մարդկանց հետ գործ չունենք, մենք հոգիների համար ենք աղոթում…. Որբեր շատ կան,…. բայց նրանք անցավոր են, իսկ վանքը պիտի մնա….

– Աստծու տան համար դո՞ւ էլ կգնաս բռնավորին աղաչելու:

– Իհարկե, ո՛րդի, դա իմ պարտքն է…. Աշխարհի մեջ ամեն ինչ անցավոր է, միայն եկեղեցին է հավիտենական»[4]:

Բռնությունը ամեն տեղ է՝ իր քարացած, կարծրացած օրենքներով: Լեոն

[1] Լեո, Մելիքի աղջիկը, տե՛ս Լեո, ԵԺ 10 հատորով, հ. 7, Ե., «Սովետական գրող» հր., 1983, էջ 149:

[2] Անդ, էջ 149:

[3] Անդ, էջ 128:

[4] Անդ, էջ 124-125:

այն բացահայտում է՝ քննության ասպարեզ բացելով թե՛ հոգևոր դասի վարքի և աշխարհիկ բարձր խավերի շրջանակում, թե՛ մարդկային հարաբերություններում՝ ընդհանրության մեջ: Ահա կույս Հեղինեն, որ հետևողական է իր բռնացումներում, եկեղեցականին ոչ հարիր հոգեբանությամբ, որի համար փույթ չէ, թե կոչնչանա աշխարհը, միայն կենդանի մնան երկնքի սպասավորները. «Մի՞թե տանու առյուծ չէ և կույս Հեղինեն: Ի՞նչ ուժ ունի նա: Քար դնել սրտում, հագնել սև շորեր, վախեցնել աղոթքի գրքերով, սրբերի անունով, ահա թե ինչպես է նա բռնանում: Եվ որքան հպատակներ ունի…. Ինչո՞վ են լավ **այս տանու առյուծները դրսի վայրենի, իսկական առյուծներից**…»[5]:

Գայանեի համար նրանք բոլորը միևնույն խմորից են, և նույնիսկ ինքը, որ պակասություն չունի, միևնույնն է, մի այլ ուժի, այլ բռնության տակ է ճմլվում:

Սուլեյման բեկի հրամանով ցից հանվածին՝ բարության ու խիզախության, հայրենասիրության, հոգևոր առաքինության մարմնացում տեր Սողոմոնին ևս տրված էր **կապելու և արձակելու իրավունքը** (ընդգծ.՝ Զ. Բ.), բայց չի էլ կարելի համեմատել մարդու կամքն ու իրավունքը ոտնահարող, մարդու շլինքը ծռած, ոչնչացած տեսնելու հոգսով տարված, տիրուհի Աննա խաթունի ոգին թուլացնող կույս Հեղինեի հետ. վերջինս չի փորձում ճանաչել տառապող մարդուն, լացում է պատերի հետևում և համաձայն է, որ բոլորը մեռնեն, հետո՝ ինքը:

Իր առանձնացող տեսակով, խելքով, գեղեցկությամբ բոլորից տարբերվող Գայանեն դարձել էր խելահեղ մարդկանց (Ջալալ բեկ, Սուլեյման բեկ, Քյոսա Մուխտար) կրքերի, ցանկությունների, անթարգմանելի սիրո զոհը.

«Երեքին էլ նա գերել էր իր աչքերի կրակով, իր արհամարհանքով, որ այնքան հրաշալի էր նրա դեմքի վրա: Բայց ինչպե՞ս պիտի դիմադրեր, քանի որ նրա զենքը միայն նույն այդ կրակն էր…»[6]:

Իր ունեցած հավատը հարազատների նկատմամբ խաթարվեց, երբ զգաց, որ իրեն խաբում են, իր սերը Ջալալի նկատմամբ նույնպես խաթարվեց, երբ փորձության հանդիպեց: Գայանեի ներաշխարհը այդ ամենից տեղատվության ենթարկվեց, նոր խմորումներ ալեկոծեցին նրա հոգեկերտվածքը՝ նոր սպասելիքներ արձանագրելով:

Հեղինակը հերոսուհուն հոգեբանական այլ տարածքում է ներկայացնում՝ կարծրացած հոգեձուլվածքով. «Նա այժմ մերժել սովորեց. մերժեց սերը, մերժեց ծնողին, անտես արավ նույնիսկ եկեղեցու խրատը: Այժմ նա ինքը պիտի երկյուղ ներշնչե, որովհետև կարող է դեռ ուրիշ բաներ էլ մերժել….»[7]:

---

[5] Անդ, էջ 129:
[6] Անդ, էջ 140:
[7] Անդ, էջ 151:

Իսկ մայրը աղջկան արնախում գազանից փրկելու համար անընդհատ շտապեցնում էր մի բան անել… Գայանեն ապշել էր իրեն շրջապատողներից. թող քանդվի ամբողջ երկիրը, թող մնացողները այրվեն, ոչնչանան վիշապի երախում, միայն Գայանեն փրկվի, քանզի թուրքի երկրում, **պարզվում է, դժբախտություն է գեղեցիկ աղջիկ լինելը** (ընդգծ.՝ Զ. Բ.): Ճակատագիրը անողորմ էր Գայանեի համար, հույս ու ապավեն հայրը չկա, մի տղամարդ ևս, որ տիրություն աներ անտեր մնացած իր երկրին, գետի պես հոսող արտասուքը սրբեր, փական դներ արնախում գազանի երախին, փրկեր աղջիկներին պիղծ ձեռքերից: Ո՞ւմ ցանկությունն է հարցնում գազանը. նման բան չկա… Ի՞նչ կարող էր անել գեղեցիկ Գայանեն նոր օրենքներ դնողների ձեռքին, նրան էլ կտանեն, կանպատվեն, երկրի ցավն է դա. առայժմ այդպես է մտորում նա. «Մի՞թե չէ հիշում Գայանեն, որ **այս երկրում բոլոր աղջիկները նազլուներ են, մարգարիտներ են: Տարան հարյուրներին, կտանեն և մեկին** (ընդգծ.՝ Զ. Բ.): Իսկ մայրը, մայրը… նա չի դիմանա, նա կխեղդվի…»[8]:

Նա արդեն այնքան է հիասթափված ամենքից, շրջապատից, երբեմնի իր սիրեցյալից, որը, դրսի բամբասանքները առած, փորձում է այդ կերպ կոտրել համառ աղջկան, վախեցնել: Ջալալը՝ Աննա խաթունին. «-….Օսմանցիները. նրանք…. գիտեն, որ Գայանեն ինքն է ուզում գնալ բեկին….

Այն աղջիկը, որի անունը Նազլու է, այժմ ապրում է թուրքերի հետ…., հիմա, ասում է, որ մարդկանց հարկավոր է եկել. թող այժմ զգույշ լինեն բոլոր բախտավորները:

….– Վերջացավ,– հուսահատ մայրը՝ աղջկան:– Արի՛, ձեռքդ տամ քո նշանածի ձեռքը և… Աստված Ձեզ հետ:

– Երբե՛ք… Քո փեսան թուրքից լավ չէ…. ,– խստությամբ արտաբերեց Գայանեն:

– Լսի՛ր, մելիքի տղա… Մելիք-Հուսեինի աղջկան փախցնելու համար չես դու ստեղծված: Գնա՛, նստիր գյուղի մարդկանց մեջ, դու էլ բամբասիր: Լսեցի՞ր ինչ ասացի. չկա մի թուրք, որից դու լավ լինեիր…»[9]:

Գայանեի սիրահարվածության մասին Ասլանի մտքերը տակնուվրա արեցին մելիք Ավանի հոգին: Նա խուլ և տխրամած դեմքով փաստեց հետևյալը.

«Պապերի խոսք է, որ անսովոր երեխան կուտե իր գլուխը»[10]:

Գայանեն իր նպատակի, իր մերժումների, փոթորկվող մտքերի, իր հարազատների չհասկացության, իրեն տհասի տեղ ընդունելու մտքի հետ մնացել էր

[8] Անդ, էջ 157:
[9] Անդ, էջ 162-163:
[10] Անդ, էջ 170:

մենակ… Մանա՛սը, նա իր Գայանեի համար կունենա՞ այլ կարծիք. նա էլ հասարակական կարծիքի տարափի տակ է ընկել, մեղադրվում է չորս կողմ կատարվող արյունահեղության մեջ. նա հեռվից հեռու իրեն կհասկանա՞, մանավանդ որ **ինքը որդեգրել էր վերջինիս չարին հակառակվելու և նրա ու բռնավորների դեմ կռվի ելնելու մտքին** (ընդգծ.՝ Զ. Բ.):

Մանա՛սը. մանկուց ինքն էր այն զորավոր ուժը, որ «ծմակի մարդուն» դեպի տուն էր կանչում. Մանա՛սը. մարդկանցից անխոս մարդը Գայանեի շնորհիվ էր, որ կապվեց մարդկանց: Գայանեն եղբայրներին հորդորում էր լսել նրան՝ բոլորից առանձնացող այդ մարդուն: Գայանեն նրան պատմություններ էր պատմել տալիս իր հզոր նախնիների մասին: Մանասը՝ Ասլանին՝ Գայանեի մասին. «Նայում էի նրան և տեսնում էի նրա մեջ Մելիք-Հուսեինին. նույն մեծ սիրտը, նույն կտրուկ և համարձակ խոսքը. վատություն նա չէր կարողանում տեսնել, խեղճերին օգնում էր, աղքատի մոտ նա էլ աղքատ էր: Աղջիկ էր նա և տղամարդ: Դու տեսե՞լ ես, որ աղջիկը մի-մի քրքրե, իմանա, թե ինչեր են եղել իրենից առաջ: Նա գիտեր ամեն ինչ, նա ճանաչում էր, թե ինչ քաջեր են եղել մեր երկրում. նա իր մատների վրա կհամրե բոլոր վատերին, վախկոտներին…. Եվ ես պատմել եմ ամեն ինչ՝ թե իմ տեսածը, թե իմ լսածը»[11]:

Լեոն վեպի կենտրոնական հերոսներից բացառիկ շնորհներով օժտված Գայանեին ներքին համառ պայքարով ու համոզվածությամբ էր զարգացման դնում՝ պատրաստելով նրան սխրագործության՝ կանգնեցնելու հերոսության պատվանդանին, իսկ մինչ այդ մելիքական տան հավատարիմ, բնության գրքին, մելիքենց տոհմական ավանդույթներին հաղորդակից Մելիքենց Մանասի օգնությամբ՝ ծանոթացումներով իր նախնիների վարք ու բարքին, նրանց գենետիկ առաքինություններին, հորոց որդի Վարանդայի մելիքների ավանդութակիր շնորհներին՝ մելիքության մաքառումներով, հերոսականությամբ լի օրինակելի, բարձր գնահատության արժանի պատմության էջերին, իրենց ժողովրդին, հպատակներին շեն պահելու, պատվելու, երկիրը հազար հարամուց, թշնամիների ոտնձգություններից, ասպատակություններից, արյունից զերծ պահելու պատվապահությանը, մելիքությունը ծաղկեցնելու, աշխարհիկ և հոգևոր գործերը զարգացնելու, հոգևոր կառույցներ արվեստակերտելու, և ամենագլխավորը՝ երկիրը ազատ ու անկախ պահելու հայրենասիրության հրամայականով:

Գայանեն սիրով ու բարությամբ, կարեկցանքով, օգնությամբ է վերաբերվում դրսի աշխարհին, իսկ դրսի աշխա՞րհը, որ հզոր ուժ է, որի առջև թևաթափվում է իրեն սատարող աղջկա եռա՞նդը, այդ աշխարհի մոգոնած դատաստա՞նը, այն, որ հազար ամոթ է. Գայանեն՝ հպարտ մելիքի դուստրը,

[11] Անդ, էջ 195:

ընտրել է թուրքին. հազար ամոթ է… մե՞ղք են բոլորով հանդերձ, և չի լինի՞ մեկը, որ այդ անարդար դատաստանից պաշտպանի հալածյալին… Նրան բացի մեծ եղբայր Հովսեփից ոչ ոք չէր հավատում, նույնիսկ մայրը, Մանասը:

Այդուամենայնիվ, Գայանեն հավատում էր, որ եթե ամենքը ծաղրում են իրեն, առ ոչինչ համարում իր հուսավառ մտքերն ու հրավառ սիրտը, ապա կա մեկը՝ ոչ կապուտաչյան, իր սիրտը գրաված երիտասարդը, որ առաջինը ծաղրեց իր մտքերն ու իր խնդրանքները, որին մի օրում մոռացավ, այլ կա մեկը՝ հավասար ամբողջ աշխարհին…, և այդ «….**Մեկը** (ընդգծ.՝ Զ. Բ.)՝ դա այն տղամարդն էր, որ պահել, ամրացրել էր Գայանեին երեխայությունից, որ սովորեցրել էր նրան ատել վատությունը, ինչ տեսակ էլ լինի նա: Բայց ինքը՝ Նազլուն չէ՞ր, որ պատմեց, թե ինչեր էր ասում այդ մարդը՝ Մանասը Գայանեի մասին….:

Եթե գետնի վրա արև կա, ի՞նչ է դա նշանակում. այն, որ այդ միջոցին երկնքում արեգակ կա… Եթե Ավետարանոցում Գայանե կար, նշանակում էր, սարերում Մանաս կա: Ո՞վ էր, որ կատաղի մոլեռանդությամբ հետևում էր իր արյունոտ գործին: Ո՞վ էր, որ գժված էր այն մտքի վրա, թե այդ գործի պես սուրբ, անսխալ և արդար բան չկա երկնքի տակ: Մանասը, միայն նա»[12]: Իր կերտած Գայանեին գուցե շատ լավ էր ճանաչում Մանասը, բայց մելիքի աղջիկն ավելին էր վերցրել Մանասի սովորեցրածից, տվածից, Մանասի պես սերտել էր կռվով պահել պատիվ ու հայրենիք, գթալ, սատարել անտերունչ մարդկանց, չհանդուրժել յոթգլխանի թշնամուն, ատել նրա յոթ պորտը, ով անխտիր պղծել է շարմաղ աղջիկներին ու կանանց, իր սար ու ձորեր, ազգային, հոգևոր սրբություններ, հայրենի կարգեր ու օջախներ. ուսուցանողն անշուշտ գիտեր իր սանի ընդունակությունները, մտաշերտերի թանձրությունը թեորիապես-տեսականորեն, բայց չէր պատկերացնում՝ որ աստիճանի են դրանք արմատացել, գործող հրաբուխ դարձել աղջկա սրտում և հոգում, մտասևեռումներում: Մի կողմից էլ՝ Մանասը վախենում էր Գայանեի անվտանգության, միամտության համար, իսկ թշնամին բորենի է, ահավոր հատկություններով տեր, ամրոցի կանայք էլ՝ Աննա խաթունը, կույս Հեղինեն՝ վախկոտ, իրենից ձեռք քաշած, Գայանեն նույնպես՝ կնարմատ:

Այդպիսի դեպքերի համար և միաժամանակ Գայանեին ամենևին հարվածի տակ չտեսնելու, չդնելու մղումով էր, որ Մանասը չէր ձգտում, չէր փորձում հավատալ, որ աղջիկն անփորձանք դուրս կգար այդ և նման այլ ձեռնարկություններից, և այդ անբարո թշնամու դեմ իսկական արժանապատվություն ունեցող երդվյալ տղամարդուն էր վերապահում իր կռիվն ընդօրինակել, ոչ Գայանեին: Գայանեն խոցվել էր նաև այն մտքից, որ Մանասը, չհավանելով

[12] Անդ, էջ 231:

հանդերձ խաչենցուն, այդ դրության մեջ իր փրկությունը տեսնում էր նրա հետ անհապաղ ամուսնության մեջ:

Սարսափելին այլ էր. Մանասի մարդկանցից մեկը, առանձին տեսնվելով Գայանեի հետ, սպառնալիքներ կարդաց բեկի նկատմամբ. «Թող Գայանեն չկարծե, թե Մանասի ձեռքը կարճ է, իրան չի հասնի. թող իմանա նա, որ իրան հետևում են: Մանասի գժերը չեն թույլ տա, որ Սուլեյման-բեկի տասն մատներից մեկը դիպչե այն աղջկան, որին Մանասը ծնողի պես սիրել է տասնութ տարիների ընթացքում… Նրանք տակն ու վրա կանեն Ավետարանոցը, կխլեն և կփախցնեն Խաչեն, կհանձնեն հայ քրիստոնյա նշանածին…

– Եվ ես ստիպված էի լացով, աղաչանքով ժամանակ խնդրել: Ինչպե՞ս հավատացնեի նրան, ինչպես համոզեի… Մի՞թե ես պիտի նրան դասեր տամ…. Այս անգամ Մանասն է ինձ դեմ»[13]:

Իրեն կանանցից ամենադժբախտը համարելով՝ Գայանեն, դայակին՝ Մեհրիին ուղղորդելով, հաց էր տալիս՝ փոխանցելու դրսում անօթևան մնացածներին, և լաց լինելով ասում էր, որ **դրսի մարդկանց փրկության համար է իրեն զոհում՝ Սուլեյմանին կնության գնալու որոշումով** (ընդգծ.՝ Զ. Բ.):

Երևան է գալիս հոր՝ քաջարի մելիք Հուսեինից ճառագող ոգեղեն ու պողպատե տրվածքը՝ լարե՛լ-լարե՛լ միտքը՝ հասնելու անհասին…

Հոգեկան ալեկոծումները, հրեղեն միտքը հանկարծակի նրան բարձրացնում ու կանգնեցնում են բուխարու քարի վրա. նա, արագությամբ պատի ճակատին կախած զենքերից մեկը հափշտակելով, իսկույն ցած է իջնում՝ հանգստության հզոր ալիք զգալով փոթորկվող ներաշխարհում… Ոչինչ չի լինում հենց այնպես… Անօգնական աղջկա տվայտումներին օգնության են գալիս նրա հզոր նախնիների ոգիները՝ ցույց տալով չարի երախից փրկվելու հնարը՝ փոքրիկ խենջարը. եթե նախնիների հոգիները ցույց են տալիս հնարը, ապա նրանք մեկնում են նաև այն ճանապարհը, որը խիզախություն անունն ունի՝ պատվով փառավորվելու ոդիսականը. տոհմային ազատամիտ ու անվախ գենն ու Մանասի սովորեցրած **(կռվով վանել ընկճվածությունը, սպասվող բռնության ալիքը)** դասերը աղջկան կանգնեցրին մեծ ու հանդուգն վճռի առջև. «Ի՞նչ էր նրա միտքը: Հրաշալի՛ բան. կարծես տոհմային զենքերի մեջ ծածկված էր մի կախարդական թալիսման, որ մի ակնթարթում կերպարանափոխեց Գայանեին: **Ամենից մերժված մարդը այժմ ինքնավստահություն ստացավ** (ընդգծ.՝ Զ. Բ.). նա գտել էր անկաշառ նեցուկը: Դա մի շատ փոքրիկ արծաթապատ խենջար էր, որ հեշտությամբ տեղավորվեց Գայանեի ծոցում…

Ընտանեկան ավանդույթները ուշադրությամբ էին վերաբերվում դեպի մելիքի տոհմային զենքերը…. փոքրիկ խենջարը նշանավոր էր նաև իր

[13] Անդ, էջ 231:

հնությամբ: Նա շինված էր լեզգիների երկրում և հարյուր տարուց ավելի էր, ինչ մի կռվի մեջ ընկել էր Մելիք-Հուսեինի պապի ձեռքը: Նրա պատյանն էլ ճարտար վարպետի գործ էր…. Գեղեցիկ էր մանավանդ խենջարի կոթը. կլոր արծաթը, որի կենտրոնում տնկված էր արծաթի մեծ մեխը, ներկայացնում էր ահագին բերանը բաց արած մի վիշապ: Որքա՛ն հեշտ է հասկացվում վարպետի միտքը…. Նա ասում է, որ աշխարհը մի հրեշավոր վիշապ է, և ով չէ ուզում ոչնչանալ այդ ահռելի բերանում, պիտի ձեռքից չտա խենջարը… Դա հին դաս է, որ այժմ կրկնվում է մի հրաշալի պարզությամբ…»[14]:

Բազմաթիվ թշնամիներով շրջապատված հերոսները առանց բացառության առաջին հերթին, որպես պարտադիր և հարկադիր պայման, ծանոթ պետք է լինեին իրենց առաջին և վերջին օգնականին՝ զենքին, ու նրա բնական հատկություններին, բնույթին, խորհուրդներին, գործածության ձևերին՝ նրան իրենց անբաժան ու պատվապահ, հավատարիմ ընկերն ուխտելու նախապայմանով:

Եվ հեռուներից՝ անցյալի փառահեղ հերոսապատումների ասքակիր քաջ պապերից ավանդված ազատ ապրելու խորհուրդը՝ իր զորավոր փիլիսոփայությամբ, իսկ փոքրիկ, արծաթափայլ խենջարը՝ որպես փրկության հրամայականի պողպատե կնիք, հասան վտանգի ենթարկված արժանավոր ժառանգորդին՝ Գայանեին:

Մելիք Ավանին իր գաղտնիքը բացելով, խնդրելով, որ իրեն հավատա, մեկնաբանելով փոքրիկ սարդի և ճանճի մասին պատմությունը, իրեն սարդ համարելով, որ պիտի բեկին իր հյուսած թակարդը զցի, ցույց տալով ծոցում թաքցրած փոքրիկ խենջարը՝ ոգևորված Գայանեն քեռուն հետևյալը խնդրեց. «– Այս փոքրիկ զենքից քիչ կա… Վաղը մարդիկ ուղարկիր, թող ման գան ամեն տեղ և քանիսը գտնեն, բերեն այստեղ: Կանչիր բոլոր զինագործներին, թող նստեն, օր ու գիշեր երկաթ ու պողպատ ծեծեն, խենջարներ շինեն: Մեծերը չենք ուզում. ամեն մեկը այնքան լինի, որ տեղավորվի աղջկա ծոցում…

– Հետո՞:

– Հետո մի ահագին հարսանիք արա: Մեզ մի օրում տուր թուրքերին: Նրանք չեն մերժի, նրանք ուրախ կլինեն. և մի գիշերվա մեջ, որքան աղջիկ կա, այնքան պողպատ կցցվի թուրքերի կրծքում….

– Դու միայն քո մասին կարող ես խոսել:

– Խոսում եմ ամենքի կողմից: Մեր գյուղում աղջիկ չկա, որ համաձայն չլինի: Մենք երդվել ենք Ավետարանի վրա:– Ցույց տալով պահարանում դրված ավետարանը, չընդունելով իր համարձակ ծրագրից զարմացած քեռու հերքումները՝ Գայանեն շշնջաց,– Ամեն մի սիրտ, որ մեզ հետ է, այստեղ երդվել է. ամեն մեկի շրթունքները համբուրել են այս Սուրբ գիրքը…. Դեռ կան

[14] Անդ, էջ 164:

Սոնան, Գյուլ-Ջհանը, Մանիշակը… Դրանք էլ կգան, քույր կգրվեն… Դու չե՞ս արգելի, քեռի… Բայց արգելես էլ, նրանք քեզ չեն լսի… Օ՜, մենք շատ ենք, մենք կհաղթենք…. Օ՜հ, քե՛ռի, քե՛ռի: Մեզ թուրքերին տուր, քե՛ռի…»[15]:

Մանասի **բերած հրաշքին** ավելանում է նաև Գայանեի **հնարագիտություն-հրաշքը,** որոնք լրացնում են մեկմեկու և դառնում են ոչ միայն մելիք Ավանի հղացած մեծ ծրագրի կարևորագույն բաղադրամասերը, այլև առաջին հիմնաքարերը, առաջին հրդեհի պատրաստ կայծ-բոցերը՝ զարկելու-այրելու-ոչնչացնելու թուրքերին, որոնք մտածում էին **քնած պահել հայերին մինչև գարնանաշուրթ, ապա կատարել արյունահեղություն՝ չխնայելով ոչ ոքի** (ընդգծ.՝ Զ. Բ.)… Մելիք Ավանն էլ, Նազլուի հաղորդած լուրերից սթափվելով, ելավ նիրհից, իր հերթին էլ փորձեց իրենց չկասկածող թուրքերին, Սուլեյման բեկին պահել քնած վիճակում, ժամանակ խնդրել՝ պատրաստվելու հարսանիքի մինչև որոշյալ ժամը՝ հուսալով՝ շաբաթը ուրբաթից շուտ գա: Մանասը լսեց մելիքին, հասկացավ սկսած մեծ գործի կարևորությունը և հրաժարվեց Գայանեին փախցնելու, Ջալալին հանձնելու մտքից: Ինքն էլ իր գժերով այդ գիշեր բերդում էր, դարանակալ՝ բեկի **սարսափազդու զարկող ուժին՝ Մելիմի խմբին** (ընդգծ.՝ Զ. Բ.), որից կենդանի մարդ չմնաց:

Եվ եկավ որոշյալ ժամը… Ամբողջ երկրով մեկ, Վարանդայի մելիքություն էպիկենտրոնով, մելիքանիստ Ավետարանոցով (**նշել ենք՝ ավանդության մեջ 1733 թ. գիշերային սպանդը օսմանցիների դեմ միայն Վարանդայի մելիքությունում՝ Ավետարանոցում է կատարվել,** ընդգծ.՝ Զ. Բ.) հայությունը մեկ ոգի, մեկ երդում, մեկ անհաղթահարելի գազան դարձած, բաց սուր-ժանիքներով ընկավ իրեն այնքա՜ն վայրենի սարսափների ենթարկած ոսոխի գինովցած մարմնի վրա:

Հեղինակը վարպետ գրչով է այդ ամենը պատկերել, իր սիրած ժողովրդական հերոսներին վիպական դրվագների կիզակետում պահել, ցույց տվել նրանց ահագնացած ուժի կարևորությունը, օտարից խլված ազատությունը նորից վերագտնելու՝ սեփական ուժերով օսմանյան յոթգլխանի վիշապին հարվածելու առաջնային նախապայմանը, որն իրագործվեց վրեժի սրի տակ՝ անխնա կոտորածներով. ճիշտ է դիտված առածը՝ «Սրով ելածը սրից էլ կընկնի»:

Կարծես ահեղ հրահանգ էր մելիքի տունը. բոլորը նշված տեղերում էին ու գործում էին անվրեպ… Գայանեն իր սպասումների մեջ աղոթք մրմնջաց, վազեց ու շառագունած դեմքը դրեց հոր որսած վագրի մորթի վրա, որ կախված էր պատից ու ջերմեռանդով կանչեց «հա՜յր, հա՜յր»… Հայրական տունն այլևս նրան ազատ թողեց իր վճիռներում: Դուրս վազելով՝ հանկարծ կանգ առավ պատշգամբում լսվող ինչ-որ թրխկոցից: Շեմքում կանգնել էր սարսափելի

[15] Անդ, էջ 202-203:

այլայլված մի մարդ. նա ներքին տարփանքով առաջացավ դեպի աղջիկը՝ իրեն հետապնդողներին արհամարհելով, իր առջև տեսնելով շանթեր արձակող Գայանեին, մեծ հրճվանք ապրեց ու ոստնեց՝ իր որսը վայելելու, բայց ընկրկեց՝ Գայանեի ձեռքում տեսնելով խենջարը, և ավելի գազազեց, առաջանալով կրքերից փոթորկված սրտում ստացավ աղջկա աներեր հարվածը… Նրանց միջև մրցությունը կատաղի էր՝ կարճատև դադարներով: Զոհն ամեն կերպ ուզում էր ճանկել, հոշոտել իր հաղթողին, իր նշանածին՝ չմոռանալով, որ իրեն մահացու հարվածողը կնարմատ էր, որի նմանները հարյուր հազարներով հեծում են իրենց ձեռքերում, հարեմներում:

Իրավ են դիտել ամենքը, մելիք Ավանը. եթե բոլոր օսմանցիները սատակվեին, բայց կենդանի մնար բեկը, նշանակում է՝ էլի հայերն են պարտվել, բայց **Մանասի դասերով սնված ու արյան վրեժխնդրություն դարձրած այդ կռիվը, որ միս ու արյուն ստացավ՝ ամբողջ Արցախ աշխարհում վերածվելով հաղթանակի տոնախմբության**, բոլոր արհամարհվածների, ընչազուրկների պաշտպան, արիական-հերոսական դարձած մելիք Հուսեինի դուստր Գայանեի կռիվն էր:

Լեռն վարպետությամբ է կերտել օսմանցիների գիշերային սպանդը:

Պատժվեցին բոլոր օսմանցիներն անխտիր՝ քնած կարծելով հայերին: Գերեվաճառ Մուխտարը գազազած կանանց զոհն էր, չնայած կարծում էր, թե իր ուղարկած ապրանքը՝ հայուհիների քարավանը, արդեն իր տիրոջը՝ Մուրադ աղային կլինի հասած (այն ետ խլվեց Ասլանի համառությամբ, ջանքերով ու խիզախությամբ):

Այդուհետ լեռներում և ամենուր հրաշքներ էին պատմվում Գայանեի մասին, ժողովուրդը գույներ չէր խնայում նրան փառավորելու…

Վերջինիս տաղանդը նոր բացահայտումներ, նոր հորիզոններ տեսանելի դարձրեց: Նրան վաղուց գերել էր **արվեստը՝ նկարչությունը**: Ձեռքն ու միտքը, խռովահույզ հոգին այժմ հրաշակերտում էին, մտքերը հրավառում տառերն ու զարդանախշերը, հոգին թևածում էր ներքին հզոր խորհուրդներից**: Նա Ավետարան էր արարում, գրում բարձր տաղանդով, ծաղկում մատյանի հրավառ էջերը.** ոչ մեկին չէր արժանացնում տեսության՝ իր մխիթարությունն արարման ու միայնության մեջ որոնելով ու… գտնելով: Հեղինակը գույներ չի խնայում մելիքի աղջկա ներաշխարհը բացահայտելու տարբեր կողմերից. «….Նա գրում էր Ավետարան:

Ծանր, մանրակրկիտ գործ, որ պահանջում էր ուշադրություն, համբերություն…. Նա ավելի ու ավելի կպչում էր այդ գործին և նրա հետ մտնում էր ստեղծագործության աշխարհը, որ ամեն ինչ մոռացնող մի հափշտակություն է:

Նա գրում էր. և դա մի անհոգի ընդօրինակություն չէր…. Գծերի, գույների մեջ նա դնում էր իր հոգին. ամեն տեղ երևում էր ինքնուրույն, համարձակ ձեռք:

Նա հասկանում էր, զգում. և սրբազան գրքի յուրաքանչյուր խոսքը առաջ դրոշմվում էր նրա սրտի մեջ և ապա այնտեղից անցնում էր թղթին, ստանալով իրան վայել գծագրություն»[16]: Տաղանդաշատ իշխանուհու **գյուտը՝ իր տեսակի մեջ եզակի ռազմական գաղտնի ծրագրերի գաղափարն ու այն կռվով կյանքի կոչելը**, հանճարի արվեստական փայլատակումների փշրանքները պահպանվել են անողոք դարերի պահոցներում, հասել ներկաներիս, հարուցել հիացմունք, դարձել ուսուցարան:

Գայանեից՝ որպես **«ԱՎԵՏԱՐԱՆ» և «ՍՈՒՐԲ ԳԻՐՔ» ծաղկողից ու գրիչից, երեք աշխատանք** է պահպանվել: **Մեկը գտնվում է Գանձասարի մատենադարանի գրապահոցում (Ձեռ. 1641 թ., Ավետարանոց, Գրիչ՝ Գայիանե), մյուսը՝ Վենետիկում, երրորդի** գտնվելու վայրը անհայտ է:

Ձենք ու կռիվ, եկեղեցու կռիվ, հայրենի ազատաբաղձ եզերք, արվեստակերտված վրձնաշխարհ, ազատություն, ժողովրդասիրություն, ճշմարիտ ու ողորմացող հավատ, ստորիններին՝ պղծվածներին, արհամարհվածներին, թույլերին ի զեն՝ զորակոչ. ահա զարմանահրաշ իշխանադստեր ներաշխարհի ոդիսականը, հայրենասեր արցախուհու ֆենոմենը, անմրցակից գեղեցկուհու մտաշխարհի անթարգմանելի ու անխորտակելի ընդհանրականը, հայոց հրեղեն ոգու անգրավ ամրոցը, հայ և իրավամբ համաշխարհային գրականության բացառիկ կերպավորման անմրցակից օրինակը՝հանձին Գայանեի, որի երկնած աներևակայելի գյուտով և գործադրած անօրինակ սխրանքով, համաժողովրդական դարձած ապստամբությամբ մի գիշերվա մեջ դիաթավալ եղավ Սարը Մուստաֆա փաշայի յոթ հազար և ավելի թվաքանակով արյունատենչ զորքը՝ տեղակայված Վարանդայում, մելիքանիստ Ավետարանոցում, սփռված Խամսայի մելիքություններում (ընդգծ.՝ Զ. Բ.)... Իրավամբ **բացառիկ ու եզակի վիպապատմական կերպավորում՝** ժամանակների հոլովույթում…

Եզրահանգմամբ, քննողական դաշտում երևան են հանվում կերպարաստեղծ համակարգի տիպաբանական շերտերի մեկնաբանումներ և ընդհանրացումներ, բարձր ու ցածր դասերի առճակատումների ընդգծված բաժանումների նկարագրություն, **ամբողջացվում՝ հայ և համաշխարհային գրականության մեջ նոր տիպի հերոսի (Մելիք-Շահնազարյան մելիք Հուսեինի դուստր Գայանե) կերպավորում** (ընդգծ.՝ Զ. Բ.), որն իր տեսակի մեջ եզակի ռազմական գաղտնի ծրագրերի գաղափարը գյուտողն ու այն կռվով իրականացնողն է:

Ընդգծվում է նոր տեսակի կռվի ի հայտ գալը.

– **ոգու պայքարի փիլիսոփայություն** (Գայանեն, Մանասը, արցախցիները, մասնավորապես՝ վարանդացիները՝ որպես այդ արժեքի կրողներ),

[16] Անդ, էջ 264:

– **կռվի փիլիսոփայություն** (մելիքադուստր Գայանե. հայրենի հերոսական ավանդույթների, աստվածային շնորհների կրող, ով իր նպատակաուղղվածությամբ, ծրագրայնությամբ, հասունացած աշխարհընկալմամբ հայրենի ավանդների, ճշմարիտ հավատի ու հայրենիքի անկախությունը պահպանելու տեսանկյունից հայ գրականության **նոր տիպի հերոսի մարմնավորումն է և նոր տիպի կռվի՝ եկեղեցու կռվի ու կռվի, նոր տիպի կռվողների փիլիսոփայությամբ, արվեստաբանի արարող ոգով ու վրձնով** (Գայանեից՝ որպես **«ԱՎԵՏԱՐԱՆ» և «ՍՈՒՐԲ ԳԻՐՔ» ծաղկողից և գրիչից**, երեք աշխատանք է պահպանվել: Մեկը գտնվում է **Գանձասարի մատենադարանի գրապահոցում (Ձեռ. 1641 թ., Ավետարանոց, Գրիչ՝ Գայիանե), մյուսը՝ Վենետիկում, 3-րդի գտնվելու վայրը անհայտ է),** իմաստասիրական խոսքով, մտախառնվածքով ու հոգեկերտվածքով գերազանցում է հայ և համաշխարհային գրականության լավագույն հերոսուհիներից շատերին՝ դառնալով **առանձնադիտվող գրական երևույթ, հերոս, նոր տեսակի եզակի կերպավորում**),

– **կռվի եկեղեցու փիլիսոփայություն** (մելիքադուստր ազատատենչ Գայանե),

– **կռվողների փիլիսոփայություն** (Մելիք-Շահնազարյան մելիք Հուսեինի տիկին Աննա խաթունի և նախնիների հզոր ոգիներից ու ժողովրդի մարդու՝ Մանասի դասերից հասունացած, ինքնագիտակցված, բարձր շնորհներով զարդարված, իր տեսակի մեջ անզուգական հերոսի՝ Գայանեի **զյուտած ռազմական գաղտնի ծրագրով ու անմիջական գլխավորությամբ գործող Վարանդայի կանայք**. օսմանցիներից պղծվածների և պղծվելուն ենթակա հարս ու աղջիկների, մայրերի հոգեբանորեն հասունացած բախման արյունալի կետ:

Այսպիսով՝ «Մելիքի աղջիկը» այսօրվա քաղաքական դաշտում իր ներկայացրած գեղարվեստի ու պատմության փիլիսոփայությամբ, բարոյահոգեբանական, հայրենասիրական, ազատասիրական, ժողովրդասիրական դասերով ձեռք է բերում արդիական բարձր հնչեղություն, ցույց տալիս անձնուրացության, բարձր գաղափարներ ուսանելու օրինակելի դրսևորումներ, հայրենիքի ազատությունը աննահանջ կռվով կռելու, սեփական ուժերին վստահելու, չպարտվելու հոգեբանություն, միաբանվելու ազգային փիլիսոփայություն, ազգային գաղափարախոսություն:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Լեո, Մելիքի աղջիկը, տե՛ս Լեո, ԵԺ 10 հատորով, հ. 7, Գեղարվեստական երկեր, Երևան, «Սովետական գրող» հր., 1983, 584 էջ:

Зинаида Балаян

ЕДИНСТВЕННОЕ В АРМЯНСКОЙ И МИРОВОЙ ЛИТЕРАТУРЕ ИЗОБРАЖЕНИЕ ДОЧЕРИ МЕЛИКА ГУСЕЙНА МЕЛИК-ШАХНАЗАРОВА ГАЯНЕ

Резюме

Ключевые слова: *Система персонажей, Анна Хатун, Гаянэ, духовный урок, политическая хроника, Манас Меликский, герои, несущие идеологию, Лео, Дизак*

В свете сложившихся обстоятельств автор патетически изобразил поведение варанданцев, тонкости психологии в лице дочери Мелика-Шахназаряна Гаяне, создав образ героя нового типа и придумав его удивительное поведение: борьбу церкви и философию борьбы. Чтобы во главе с ним выявить уникальный и необычный типа бойцов, посвятить себя искусству благочестия, возвысить высокую и удивительную культуры, освящая его необычное поведение, создать особый вид исторических образов, продемонстрировать национальную сущность армянского народа - его свободолюлие и философию свободы. На примере мелика Манаса и его бесстрашных храбрецов признать важность мелких сражений, рассмотреть роль и мудрость армянского народа в духовной и физической структуре национальной идеологии; мастерски рассказать о великолепной и ужасающей природе страны, ее национальных ценностях, ее историко-географическом окружении, подчеркнуть свержение дикого османского ига, документально описать беспрецедентную в истории победу армян, обретенную ценой крови.

Zinaida Balayan

THE ONLY IMAGE OF THE DAUGHTER OF MELIK HUSEYN MELIK-SHAKHNAZAROV – GAYANE IN ARMENIAN AND WORLD LITERATURE

Summary

Key words: *Character system, Anna Khatun, Gayane, spiritual lesson, political chronicle, Manas Melikents, ideological heroes, Leo, Dizak*

In the light of the circumstances, the author pathetically depicted the behavior of the Varandaans, the subtleties of psychology in the face of the daughter of Melik-Shakhnazaryan Gayane, creating the image of a new type of hero and inventing his amazing behavior: the struggle of the church and the philosophy of struggle. In order to identify the unique and unusual type of fighters led by him, devote himself to the art of piety, exalt a high and amazing culture, sanctify his unusual behavior, create a special kind of historical images, demonstrate the national essence of the Armenian people - their freedom of freedom and philosophy of freedom. Using the example of Melik Manas and his fearless brave men, recognize the importance of small battles, consider the role and wisdom of the Armenian people in the spiritual and physical structure of national ideology; masterfully tell about the magnificent and terrifying nature of the country, its national values, its historical and geographical environment, emphasize the overthrow of the wild Ottoman yoke, documented the unprecedented victory of the Armenians in history, gained at the cost of blood.